## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/67 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **18 օգոստոսի 2023թ.**

2023թ-ի օգոստոսի 16-18-ը ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ Մեծամոր համայնքի Մերծամոր քաղաքի այգու բարեկարգման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/67 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Է. Հովհաննիսյան՝ | Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, |
| Ս. Սահակյան՝ | Մեծամորի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի մասնագետ-ճարտարապետ, |
| Վ. Ղազարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ, |
| Ս. Սարգսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Է. Հովհաննիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Հ. Գուլաբյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, բացակայում էր Մեծամորի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ Վ. Բաղդասարյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

### 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2023թ-ի օգոստոսի 16-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի վարչական կենտրոն 1 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 16:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված միավոր ծառայությունների գնման գների հանրագումարը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի այգու բարեկարգման աշխատանքներ | 31,857,782.32 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/67 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ | – | – | – | – |
| 2 | «ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Վարդաշեն 4փ., 42տ | +37477481666 | mtallc2021@gmail.com | 00497639 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան,

բացառությամբ՝ «ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ի, որի հայտում բացակայում ենք Ընթացակարգի հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկի փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 2-ի և հայտի ապահովումը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

- **«ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ**-ի, որի հայտում բացակայում ենք Ընթացակարգի հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկի փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 2-ի և հայտի ապահովումը:
- **«ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում, բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիայի «Շինարարության իականացում՝ էներգետիկ» ներդիրը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| **Գնման առարկայի անվանումը** | | **Մասնակցի անվանում** | **Գնման հայտով սահմանված գնման գին** | **Մասնակիցների առաջարկած գները** | | |
|---|---|---|---|---|---|---|
| **N** | **Հայերեն** | | | **արժեք** | **ԱԱՀ** | **Ընդհանուր գինը** |
| 1 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի այգու բարեկարգման աշխատանքներ | «ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ | 31857782.32 | 19778000 | 3955600 | 23733600 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

16.08.2023թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. «ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

17.08.2023թ-ին Հանձնաժողովը արձանագրեց.

1. «ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ-ի կողմից, որը հայտով ներկայացված փաթեթում, հայտի ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի տեսքով, Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջները չի պահպանել և ներկայացված երաշխիքի բնօրինակը՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ի դրությամբ, ուղեկցող գրությամբ չի ներկայացրել գնահատող հանձնաժողովին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

18.08.2023թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.10 կետով սահմանված պահանջները:

2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| - | «ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ՝ | անբավարար |
| 1 | «ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ՝ | անբավարար |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով սույն արձանագրության 5-րդ կետում նշված տեղեկատվությունը, Հանձնաժողովը որոշեց.

1. ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/67 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջների համաձայն:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Է. Հովհաննիսյան ________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ս. Սահակյան ________

Վ. Ղազարյան ________

Ս. Սարգսյան ________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան ________